

# Հայ պարբերական մամուլը 1848 թ. մոլդովական ազգային շարժման մասին

*Քերնեցյան Արման*

**Հանգուցային բառեր.** *Դանուբյան իշխանություններ, Մոլդովա, հեղափոխություն, ազատագրական պայքար*

1820-30-ական թթ. Դանուբյան իշխանությունների մաս կազմող Մոլդովան թեև շարունակում էր մնալ Օսմանյան կայսրության տիրապետության ներքո, սակայն երկու ռուս-թուրքական պատերազմների և դրանց հետևանքով կնքված 1812թ. Բուխարեստի և 1829թ. Ադրիանապոլսի համաձայնագրերի, ինչպես նաև 1821թ. Վալախիայում բռնկված հակաթուրքական ապստամբության արդյունքում Օսմանյան իշխանությունները ստիպված էին որոշակի զիջումների գնալ: Դանուբյան ժողովուրդների համար հետապստամբական շրջանում ունեցած ամենակարևոր ձեռքբերումը թերևս հույն-ֆանարիոտական վարչակարգի վերացումն էր: Այդուհետ Մոլդովայում և Վալախիայում տեղական կառավարիչներ կամ հոսպոդարներ էին նշանակվելու միայն ծագումով մոլդովացիներն ու վալախները: Ընդունված է համարել, որ սրանով Դանուբյան իշխանություններում դրվեց ազգային իշխանության սկիզբը<sup>1</sup>: Սակայն ներքին կյանքում դեռևս շարունակվում էին չլուծված մնալ սոցիալ-տնտեսական և քաղաքական բազում հիմնախնդիրներ: Խոր հակամարտություն էր առկա հատկապես պահպանողականորեն տրամադրված խոշոր բոյարների և փոփոխությունների հակված ազատական մանր ու միջին ազնվականների, ինչպես նաև բուրժուազիայի և գյուղացիության միջև:

1848թ. Եվրոպայում սկիզբ առած ազգային հեղափոխական և ազատագրական շարժումների նախօրյակին Դանուբյան իշխանություններում շարունակում էին չլուծված մնալ ազգային և սոցիալական բազմաթիվ խնդիրներ, որն էլ հող նախապատրաստեց հերթական ազգային-ազատագրական պայքարի բռնկման համար: Դրա սկիզբը ազդարարվեց Մոլդովայում: Նոր շարժման համար առիթ հանդիսացան հարևան Ավստրիական կայսրությունում բռնկված հեղափոխությունը և կայսրության մաս կազմող ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը: Դրանց նմանությամբ դանուբյան իշխանություններում սկսված շարժումը կրեց միաժամանակ սահմանադրական, ազատական և ազգային-ազատագրական բնույթ:

Մոլդովացիների ազգային շարժումը ներառել էր հասարակական ամենալայն շերտերին: Նրանում ընդգրկված էին գյուղացիներ, արհեստավորներ առևտրականներ, ազատական դիրքերից հանդես եկող շատ բոյարներ, բուրժուաներ և պետական աստիճանավորներ: Մոլդովական ընդդիմությունը ներկայացնող մտավորականները կրում էին եվրոպական առաջադիմական գաղափարների ազդեցությունը:

1848թ. մարտին Մոլդովայի վարչական կենտրոն Յասսիում մի շարք բոյար-

<sup>1</sup> Miller W., The Ottoman Empire and its Successors, 1801-1927, Cambridge at the University press, 1936, p. 127:

ներ, բուրժուաներ և պետական պաշտոնյաներ, դժգոհ լինելով հոսպոդար Մ. Ստուրճայի միահեծանությունից և անձնիշխան կառավարման մեթոդներից, ժողովրդին ուղղված կոչ հրապարակեցին, որով հորդորում էին ոտքի ելնելու և հանուն իրենց «կյանքի, գույքի և ապագայի» ապահովության պահանջել նոր «հայրենասեր» հոսպոդարի ընտրություն<sup>2</sup>:

1848թ. մարտի 27-ին Յասսիի «Պետերբուրգ» հյուրանոցում տարբեր վայրերից հավաքված շուրջ հազար բոյարներ, բուրժուաներ և մտավորականներ կազմեցին 35 կետից բաղկացած «կոչ-հանրագիր», որն ուղարկեցին հոսպոդար Մ. Ստուրճային: Նրանք հոսպոդարից պահանջում էին հարգել տեղական օրենքները, զսպել կաշառակերությունն ու պաշտոնյաների չարաշահումները, պահպանել անձի անձեռնմխելիությունը, բարելավել գյուղացիության վիճակը, երկրամասի տարածքում ընդլայնել կրթական-լուսավորչական գործունեությունը, ցրել վարձկան արնաուտներից կազմված գորաջոկատները, վերացնել մարմնական պատիժները, չեղյալ հայտարարել ներքին պարհակները, մտցնել պետական պաշտոնյաներին պատասխանատվության կանչելու կարգ, ազատ արձակել քաղաքական բանտարկյալներին, վերացնել գրաքննությունը և այլն<sup>3</sup>:

Վերահաս ապստամբությունից ահաբեկված Ստուրճան ստիպված էր ընդունել հանրագրում ներկայացված բոլոր պահանջները՝ բացի երկուսից, այն է՝ ցրել արնաուտական գորաջոկատները և անցկացնել ներկայացուցչական ժողովի վերընտրություններ:

Ընդդիմադիրները հավաքվեցին շարժման ղեկավարներից Ալեքսանդր Մավրոկորդատոսի տանը, որպեսզի քննարկեն այդ իրավիճակում իրենց հետագա գործողությունները: Պայքարի հետագա մարտավարության շուրջ նրանց միջև տարաձայնություններ ծագեցին, որի պատճառով գործողությունների հապաղում եղավ: Դրանից օգտվեց Մ. Ստուրճան, ով, հաղթահարելով սկզբնական շրջանում իրեն համակած խուճապը, զինված ուժեր մտցրեց քաղաք, որոնց հիմնական մասը բաղկացած էր արնաուտներից: Ապստամբների մի մասին հաջողվեց դիմել փախուստի, սակայն 300 հոգի ձերբակալվեցին, որոնցից տասներեքին Ստուրճան Գալացի վրայով ուղարկեց Կոստանդնուպոլիս, որտեղ սուլթանական կառավարությունը նրանց հետ դաժան հաշվեհարդար տեսավ<sup>4</sup>:

1848թ. մոլդովական ազգային շարժումը լայն արձագանք գտավ եվրոպական մի շարք երկրներում և տեղի մամուլում: Շարժման նկատմամբ բավարար հետաքրքրություն է ցուցաբերել նաև ժամանակի հայ պարբերական մամուլը: 1848թ. գարնանը Մոլդովայում սկսված ազգային շարժմանն առաջիններից մեկն անդրադառնում է Կոստանդնուպոլսում լույս տեսնող «Հայաստան» շաբաթաթերթը, որը խմբագրում էր արևմտահայ ազգային-պահպանողական հոսանքի երևելի ներկայացուցիչ Հովհաննես Չամուռճյան-Տերոյենց Պատվելին (1801-1888): Միապետա-

<sup>2</sup> Georgescu V., The Romanian A History, Ohio State University Press Columbus, 1991, p.141: История Румынии, Под ред. М. Поллера, М., 1950, стр. 157.

<sup>3</sup> История Румынии 1848-1917, Ред. колл. Виноградов В.Н. и др., М., 1971, стр. 22.

<sup>4</sup> Революции 1848-1849, т. II, Под. ред. Потемкина Ф.В. и Молока А. И., М. 1952, стр. 359-360. Краткая история Румынии, Отв. Ред. Виноградов В.М., М., 1987 стр. 170.

կան կարգերի կողմնակից և Բարձր դոան վարած ներքին քաղաքականության ջատագով Հովհ. Չամուռճյան-Տերոյենցը չէր դրվատում Օսմանյան կայսրության դեմ ուղղված անջատողական շարժումները: Ի սկզբանե ճիշտ չընկալելով Մուղղվայում սկսված ազգային շարժումը՝ նրա հրատարակած «Հայաստանը» Յասսիում տեղի ունեցած մարտյան իրադարձությունները ներկայացնում է որպես «շփոթ»<sup>5</sup>: Թերթը դրանով ակնհայտորեն ցանկանում է նսեմացնել մուղղվացիների սկսած ազգային շարժման բնույթն ու նպատակը: Չամուռճյան-Տերոյենցն իր ընթերցողներին վստահեցնում է, որ ստեղծված «աղմուկը» ընդամենը «վոյնողայի (հոսպոդարի-Ս.Բ.) անձի դեմ է» ուղղված, որը կազմակերպել են նրա «թշնամիները»: Մակայն իշխանություններին հաջողվել է «խոհեմ վարմունքով առանց մեծ վնաս պատճառելու» սաստել նրանց և Մուղղվայում վերականգնել «բարեկարգությունը»<sup>6</sup>:

Հակառակ «Հայաստանի» հանգստացուցիչ տոնին և նրա կողմից Յասսիի դեպքերին փութկոտությամբ վերջակետ դնելու տրամադրվածությանը՝ Մուղղվայի մայրաքաղաքում սկսված իրադարձություններն իրականում այնքան լուրջ էին, որ թերթը որոշ ժամանակ անց նորից անդրադարձավ դրանց: Հետագա համարներում Հովհ. Չամուռճյանի պարբերականը Մուղղվայում տեղի ունեցածը արդեն «խռովություն է» համարում և հավաստում, որ դրա կազմակերպիչ բոյարներին կառավարությունը ձերբակալելու միջոցներ է ձեռք առնում: Արդյունքում հաջողվել է ձերբակալել ղեկավարներից ոմանց, որոնք, ըստ թերթի, «ճանաչուած եւ երեւելի» անձինք են, սակայն մի մասին այդուհանդերձ հաջողվել է դիմել փախուստի: «Հայաստանի» տեղեկություններով ձերբակալվածները «մօտ օրերս մայրաքաղաք կը բերուին»<sup>7</sup>: Անդրադառնալով ապստամբության ձերբակալված անդամների հետագա ճակատագրին՝ թերթն ավելի ուշ հաղորդում է, որ նրանք պահանջել են՝ դատն «իրենց երկրի (Մուղղվայի - Ս.Բ.) օրենքովը տեսնուի»<sup>8</sup>: Ապստամբների քաղաքական այս պահանջը, որը նրանց կողմից միտված էր ընդգծելու Մուղղվայի ինքնուրույնությունը Բարձր Դոնից, «Հայաստանի» պահպանողական խմբագիրն ընկալում է դատվողների նեղ շահերի տեսանկյունից՝ ասելով, որ դրանով «իրենց օգուտ մը կըլլա յանցանքնին մեղմանալու»<sup>9</sup>:

Փաստորեն «Հայաստանը» ճիշտ չի ընկալում Մուղղվայում սկսված ազգային-ազատագրական շարժման ոչ դրդապատճառները և ոչ էլ՝ հետապնդած նպատակը: Թերթի խմբագիրը խնդրին մոտենում է ի նպաստ օսմանյան իշխանության շահերի և այդպիսով իրադարձությունները լուսաբանում ակնհայտ միտումնավորությամբ: Հովհ. Չամուռճյանի այս դիրքորոշումը ժամանակին արժանացել է հայ ազատականների և հեղափոխականների քննադատությանը: Նրա գաղափարական անհաշտ հակառակորդ արևելահայ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանը «Երկու տող» աշխատությունում կծու սարկազմով նկատել է, որ «եթե

<sup>5</sup> «Հայաստան», Կ. Պոլիս, 1848, 17 ապրիլի:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում, 1848, 15 մայիսի:

<sup>8</sup> Նույն տեղում, 1848, 29 մայիսի:

<sup>9</sup> Նույն տեղում:

վատությունը ձեռնածուների արկղի նման երկու հատակ չունի, ապա ուրեմն պ. Չամուռճյանը հասել է մինչև վատության հատակը»<sup>10</sup>: Հովհ. Չամուռճյան-Տերոյենցի գաղափարական մեկ այլ ընդդիմախոս, արևմտահայ նշանավոր հրապարակախոս Մ. Մամուրյանը նրան բնութագրում է որպես ծայրահեղ անսկզբունքային և իր դիրքորոշումներում անհետևողական մարդ, որն «այսօր թուրք է, և թրքաց շահերը կպաշտպանե, վաղը ռուս է, և ռուսաց քաղաքականությանը հետևիլ կհորդորե, ուրիշ օր մը կրնա թաթար լինիլ, և թաթարներուն խանին առջև ծունր դնել»<sup>11</sup>:

Մոլոդովական ազգային շարժման դրդապատճառների և առաջադրած նպատակների մասին ավելի անկողմնակալ և հավաստի տեղեկություններ է հաղորդում Վիեննայի Միախթարյան միաբանության «Եվրոպա» պարբերականը, որը հայ մամուլի պատմության մեջ առաջին քաղաքական թերթն էր:

«Եվրոպան» Մոլոդովայում «պատահած վերջին դեպքերու» կապակցությամբ իբրև դրդապատճառ իրավացիորեն համարում է 1848 թ. Եվրոպայում ծայր առած հեղափոխություններն ու ազգային շարժումները: Պարբերականի համոզմամբ հատկապես Ֆրանսիայում «փետրուարի մեջ եղած յեղափոխութիւնը հոստեղացիներուն վրայ մեծ ազդեցութիւն ըրած էր»: Մոլոդովացիներին առանձնապես ոգևորում է Եվրոպայում տիրող մթնոլորտը, որը հագեցած է «ազատութեան սիրով»: Նրանք տեսնելով, որ «Աւստրիան սահմանադրութիւն տուաւ՝ այն ստենը ավելի եւս բորբոքեցան, վասն զի կը տեսնէին, որ իրենց սահմանակիցներն ու Պուգովինայի մէջ բնակուող իրենց ազգակից եղբայրներ նոյն ազատութիւն կը վայելէն, անոր համար կը բաղձային, որ իրենց մեջն ալ քանի մը նորոգութիւններ ըլլան»<sup>12</sup>:

Ընդգծելով Մոլոդովայում սկիզբ առած շարժման ազգային ու ազատագրական բնույթը՝ «Եվրոպան» շարունակում է հավաստի տեղեկություններ տպագրել պայքարի սկզբնավորման և դրա ընթացքի վերաբերյալ: Անդրադառնալով մարտի 27-ին «Պետերբուրգ» հյուրանոցում ընդդիմության հրավիրած հավաքին՝ «Եվրոպան» հայտնում է, որ դրան մասնակցում էին «երկրի ամեն կողմերեն եկած ազնուականներ (պոյարներ)»<sup>13</sup>: Իրականում հազար հոգուց բաղկացած այս հավաքին, բոյարներից բացի, մասնակցում էին նաև բազմաթիվ արհեստավորներ, առևտրականներ ու մտավորականներ<sup>14</sup>: «Եվրոպան» ճիշտ է ներկայացնում հավաքի ընթացքում կազմված հանրագրի բովանդակությունը և էությունը, որում ներկայացված պահանջերն, ըստ թերթի, «նոր բաներ չէին, որ չափ եղած օրենքներուն ճիշտ պահպանութիւնը»: Ըստ թերթի՝ հանրագրի պահանջները հանգում էին հետևյալին՝ «գեղացիներու» պարհակները թեթևացնել, «ամենուն իրաւունքը աղէկ պահել», միջոցներ ձեռնարկել «առուտուրը ծաղկեցնելու» համար, բարձիթողի մատնված կրթությունը «բարեկարգել», տպագրությունը «ազատ թողուլ», «ազ-

<sup>10</sup> Մ. Նալբանդյան., Երկեր, Ե., 1985, էջ 433:

<sup>11</sup> Մ. Մամուրյան, Երկեր, Ե., 1966, էջ 564-565:

<sup>12</sup> «Եվրոպա», 1848, 6 հունիսի, թիւ 23, էջ 100:

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> См. История Румынии 1848-1917, стр. 22.

գային պահապան գորք հաստատել», «տիվաններու» վերընտրություն կատարել, որպեսզի հոսպոդարը «իր կողմնակիցները եւ իր ձեռքի տակ եղող մարդիկներն ընտրել» չկարողանա<sup>15</sup>:

Մխիթարյանների պարբերականը սկզբնաղբյուրի հավակնող զարմանալի ճշգրտությամբ<sup>16</sup> նկարագրում է Յասսիում տեղի ունեցած հետագա իրադարձությունները, մասնավորապես տեղեկացնելով, որ երբ ընդդիմադիրները «Մարո-գորդատոյին տանը ժողովված էին, իշխան է (հոսպոդարի - Ա.Բ.) կողման է մարդ եկաւ ու իմացոց, որ ինք ամէն խնդիրները կընդունի, բայց երեսփոխաններուն սենեկներուն լուծումը եւ ազգային պահապաններու հաստատութիւնը շնորհիւ չուզեր»<sup>17</sup>: Պարբերականի հաղորդած տեղեկությունը միանգամայն ճիշտ է, քանզի Մ. Ստուրճան իրեն ներկայացված 35 կետերից միայն երկուսի նկատմամբ էր, որ զիջման չէր գնացել, խոսքը վերաբերում է ներկայացուչական ժողովի վերընտրությանը և արնաուտական ջոկատների ցրմանը, քանզի երկու կետն էլ անմիջականորեն վտանգում էր իր իշխանության ամրությունը<sup>18</sup>:

Շարունակելով ամենայն մանրամասնությամբ իրազեկել Յասսիում կատարված իրադարձությունների մասին՝ «Եվրոպան» գրում է, որ Ստուրճան անցնելով հակահարձակման, ապստամբների վրա հազարից ավելի ձիավոր և հետևակ զինվորներ է ուղարկել, որոնց գլխավորում են հոսպոդարի որդիներ Դեմետրիոսն ու Գրեգորեն: Հրանոթներով զինված ջոկատները պաշարեցին այն տունը, որտեղ հավաքված էին ընդդիմադիրները: Ներխուժելով տուն նրանք շատերին ձերբակալեցին և «պաղ գիշրվան մէջ առանց կատարեալ զգեստի Գալաց տարին»: Թերթի հաղորդմամբ՝ ձերբակալվածները ողջ ճանապարհին ենթարկվել էին ուղեկցող արնաուտների բռնություններին ու ծաղրուծանակին<sup>19</sup>:

«Եվրոպան» ի տարբերություն «Հայաստանի», ոչ միայն անկողմնակալ դիրքերից է լուսաբանում Մոլդովայում սկսված համաժողովրդական շարժումը, այլև ճիշտ է ընկալում նրա բռնկման շարժառիթները և նպատակադրումները: Պարբերականը Դանուբյան իշխանություններում տեղի ունեցածն ըստ էության դիտարկում է 1848-1849թթ. եվրոպական հեղափոխությունների համատեքստում՝ ընդունելով այն որպես դրանց բաղկացուցիչ մաս: Վիեննայի՝ Մխիթարյանների պարբերականը, ի տարբերություն պոլսահայ «Հայաստան» թերթի, որն է կաշկանդվածություն չունեւր մոլդովական իրադարձություններն անկողմնակալ ներկայացնելու, քանի որ ուղղված չէր ավստրիական կայսրության դեմ: Մինչդեռ «Հայաստան» այս իմաստով կաշկանդված էր: Ինչ վերաբերում է «Եվրոպայի» հրապարակումներին, ապա թերթը նույն մոտեցմամբ լուսաբանում էր նաև եվրոպական մյուս ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը:

Շարժման ղեկավարներին ու ակտիվիստների մի մասին ձերբակալելով, իսկ

---

<sup>15</sup> «Եվրոպա», 1848, 6 հունիսի, թիւ 23, էջ 100:

<sup>16</sup> Georgescu V., The Romanian A History, p.142-143: Революции 1848-1849, т. II, стр. 359-360: Краткая история Румынии, стр. 170: История Румынии 1848-1917, стр. 22-25.

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> См. История Румынии 1848-1917, стр. 23.

<sup>19</sup> Նույն տեղում:

մյուսներին փախուստի մատնելով՝ Մ. Ստուրճան շտապեց տոնել հաղթանակը: Նա Մոլդովայի իր «սիրելի քաղաքացիներին» ուղղված կոչ հրապարակեց, որում հավաստիացնում էր, որ «խռովություններն ու դավադրությունները» ճնշված են և երկրամասում վերականգնված է «կարգուկանոնը»<sup>20</sup>: Իրականում, սակայն, շարժումը նոր թափով ծավալվեց հատկապես գյուղական շրջաններում: Տարբեր գավառներում գյուղացիները ոտքի ելան և հրաժարվեցին գնալ կոռի և կատարել ավատական մյուս պարիսկները: Բացի դրանից՝ նրանք մտադիր էին միավորվել և շարժվել դեպի Յաշ: Այս լուրերից տագնապած Մ. Ստուրճան երկրի տարբեր շրջաններում գործեր տեղակայեց: Ձեռնարկված միջոցները բավարար չհամարելով՝ նա ռազմական օգնության խնդրանքով դիմեց Ռուսաստանի կայսր Նիկոլայ I-ին (1825-1855): Նա չհապաղեց Դանուբյան իշխանություններ հերթական անգամ գործեր մտցնել, որն առաջ բերեց «Հայաստանի» անթաքույց գոհունակությունը: Թերթը տեղեկացնում է, որ Քիշինևից ապրիլի 20-ին թվագրված լուր է ստացել, որ Մոլդովայի սահմանին բանակել են «6-7 գունդ ռուսի զորք»<sup>21</sup>:

Այս տեղեկությունը հավաստի էր: Ցարական կառավարությունն իրավամբ անհանգստանում էր, որ Մոլդովայում բռնկված համաժողովրդական ալիքը կտեղափոխվի իր տարածքը, մասնավորապես Բեսարաբիա: Ուստի Պրուտ գետի երկարությամբ գործեր տեղակայեց՝ միաժամանակ փակելով Դնեստրի և Դանուբի սահմանը<sup>22</sup>:

Դանուբյան իշխանություններում տիրող իրավիճակին անդրադառնում է նաև արևմտահայ մեկ այլ պարբերական՝ «Արշալույս արարատյանը», որը 1840 թվականից հրատարակվում էր Ձմրտունիայում՝ արևմտահայ ազգային-պահպանողականության նշանավոր ներկայացուցիչ Ղուկաս Պալլազարյանի (1810-1878) խմբագրությամբ: Թերթը Մոլդովայում կատարվող իրադարձությունները լուսաբանելիս ցուցաբերում է ակնհայտ իշխանամետ դիրքորոշում՝ ետ չմնալով «Հայաստանի» որդեգրած քաղաքականությունից: Ղ. Պալլազարյանն իր թերթի էջերում գոհունակություն է հայտնում առ այն, որ «օգոստափառ սուլթանի» շնորհիվ, ի տարբերություն Եվրոպայի, օսմանյան տերության մեջ կատարյալ «հանգստություն» և «բարեկարգություն է» տիրում: Նրա համոզմամբ՝ Օսմանյան կայսրությունն ապահովագրված է հեղափոխություններից, քանի որ սուլթանի «մարդասիրական» խնամքը և նրա «նախարարաց բարեջան» գործունեությունը պատշաճորեն գնահատվում է հպատակների կողմից և «տերութեան բոլոր ազգերը երախտազետ սրտիւ եւ ջերմեռանդութեամբ աղօթող են... սուլթանի երկար կենացը համար»<sup>23</sup>:

Սակայն, հակառակ «Արշալույս արարատյանի» լավատեսական կանխատեսումների, ընդամենը հաշված օրեր անց բռնկվեցին Մոլդովայի դեպքերը: Թերթը, հավատարիմ իր կողմից որդեգրված սկզբունքին, ապրիլյան համարներում ան-

<sup>20</sup> История Румынии 1848-1917, стр. 25.

<sup>21</sup> «Հայաստան», 1848, 15 մայիսի:

<sup>22</sup> Революции 1848-1849, т. II, стр. 360, И.-А. Поп, И. Болован, История Румынии, пер. с рум., М., 2005, стр. 410.

<sup>23</sup> «Արշալույս արարատյան», 1848, մարտի 5, թիվ 306, մարտի 19, թիվ 307:

նկատ է թողնում դեռևս մարտ ամսին Յասսին և ապա ողջ Մոլդովան ընդգրկած համաժողովրդական շարժումը: Եթե «Հայաստանը» թերագնահատում էր մոլդովական շարժումը՝ այն որակելով որպես «շվիթ», ապա «Արշալույս արարատյանը» պարզապես անտեսում է այն և նախկին ոգով շարունակելով՝ հավաստում, թե օսմանյան տերությունում «հանդարտութիւնը շարունակվում է»<sup>24</sup>: Ղուկաս Պալղազարյանի համար ներքաղաքական կայունության պահպանումն այնքան սնեռուն գաղափար է, որ չի խորշում ակնհայտ կեղծիքի դիմելու: Ըստ նրա՝ Օսմանյան կայսրությունում ազգային-ազատագրական շարժումների ծագման համար ոչ մի հիմք չկա, քանզի սուլթանը իր հպատակներին վերաբերում է հավասարաչափ հոգածությամբ՝ «առանց տարբերութիւն մը ընելու անոնց զանազան ազգութեան և կրօնքին համար»<sup>25</sup>:

Նիկոլայ I-ը, չբավարարվելով Մոլդովայի սահմանագլխին ռուսական զորքերի տեղակայմամբ, 1848թ. ապրիլին արտակարգ լիազորություններով Դանուբյան իշխանություններ գործուղեց գեներալ Ալեքսանդր Դյուհամելին (1801-1880), որն աչքի էր ընկել դեռևս 1831թ. լեհական ազգային-ազատագրական պայքարը ճնշելու գործում՝ դրա համար պարգևատրվելով «Արիության համար» մակագրված ոսկե սրով<sup>26</sup>: Ռուս գեներալն այս տարածքներում, ելնելով իրավիճակից, ընդհուպ մինչև զինված ուժեր մտցնելու իրավասություն ուներ: Իր հերթին Բարձր դուռը Մոլդովա և Վալախիա ուղարկեց իր կոմիսարին՝ Թալաթ Էֆենդիին<sup>27</sup>:

Տեղեկացնելով այս մասին՝ «Հայաստանը» մանրամասնում է, որ ռուս և թուրք կոմիսարը Դանուբյան իշխանությունների ժողովրդին զգուշացրել են, որ հետագա «անկարգութիւնների» դեպքում ցարն ու սուլթանը պատրաստ են գորքեր մտցնել և ցանկացած գնով վերականգնել երկրամասի «խաղաղութիւնն» ու «կարգուկանոնը»<sup>28</sup>:

«Արշալույս արարատյանը» հաղորդում է, որ Բուխարեստից ստացած լուրերի համաձայն այնտեղ է հասել «Տյուհամել անուն ռուս զօրապետը», որը ռուսաց կայսեր կողմից նշանակված է իբրև «արտաքո կարգի գործակալ»: Իրադարձության թողած տպավորությունը թերևս ավելի ազդեցիկ դարձնելու համար թերթը չի զլանում բացատրել, որ ռուսական զորքերը նույնպես կմտնեն իշխանությունների տարածքներ, եթե այնտեղ «ծանր խռովութիւններ և անկարգութիւններ» ծագեն<sup>29</sup>:

Թե «Հայաստանը» և թե «Արշալույս արարատյանը» Դանուբյան իշխանություններում տեղի ունեցող իրադարձությունները գետեղում են «Ներքին լուրեր» խորագրի ներքո, ըստ այդմ դրանք դիտարկելով որպես Օսմանյան կայսրության ներքին խնդիր: Նրանք սկսված համաժողովրդական շարժումը որակում են

---

<sup>24</sup> Նույն տեղում, ապրիլի 16, թիվ 309:

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Шилов Д.Н., Кузьмин А.Ю., Члены Государственного совета Российской империи 1801-1906, СПб, 2007, стр. 73.

<sup>27</sup> История Румынии 1848-1917, стр. 26.

<sup>28</sup> «Հայաստան», 1848, 12 հունիսի:

<sup>29</sup> «Արշալույս արարատյան», 1848, մայիսի 14, թիվ 311:

որպես «խռովութիւն» և միանշանակ կողմ են արտահայտվում որ դա ճնշվի սուլթանական և ցարական ժանդարմական միջամտությամբ:

«Եվրոպան», լուր տալով Ա. Դյուհամելի ժամանման մասին, հայտնում է այդ կապակցությամբ իշխան Ստուրճայի կողմից Նիկոլայ I ցարին երախտիքի նամակ հղելու մասին: Պարբերականն ակնհայտորեն չի ողջունում ռուսական զորքերի ներկայության հեռանկարը Դանուբյան իշխանություններում: Իսկ ճգնաժամի այսքան խորացման համար սխալմամբ մեղադրում է միայն հոսպոդար Ստուրճային, քանի որ վերջինս, եթե «խոհեմությամբ մի քիչ զիջանելու լիներ, ինքն ալ ասանկ անհանգստութեան ու ստելութեան մեջ չէր ընկնի»<sup>30</sup>:

Մխիթարյան միաբանության պարբերականը կարծում է, որ ժողովրդի «դառնութիւնն ու ստելութիւնը» ուղղված է միայն Ստուրճայի անձի դեմ՝ չհասկանալով, որ հոսպոդարի նկատմամբ եղած դժգոհությունները ընդամենը առիթ էին և ոչ թե պատճառ մոլոդովացի ժողովրդի հասունացած զայրույթի պտոթկման համար:

Գալով Դանուբյան իշխանություններ՝ գեներալ-կոմիսար Ա. Դյուհամելը այստեղ տիրող իրավիճակը գնահատեց որպես լրջագույն վտանգ ռուսական կայսրության համար: Նա մոլոդովացիների առաջ քաշած քաղաքական պահանջները ընկալեց որպես ֆրանսիական ուտոպիականության պարզ կրկնօրինակություն<sup>31</sup>:

Երբ ազգային-ազատագրական շարժումն ընդգրկեց նաև Վալախիան, Ա. Դյուհամելը որոշեց, որ ժամանակն է դիմել վճռական գործողությունների: Նա գեներալ Դ. Գերշենցվայզին, ով Լեովոյի շրջանում էր տեղակայված, առաջարկեց անցնել Մոլդովայի սահմանը, որպեսզի այնտեղ կանխվեր Վալախիայից խռովության տարածումը դեպի ռուսական տիրույթներ: Նրա համոզմամբ՝ վալախների ապստամբությունը կարող էր նոր թափ հաղորդել մոլդովական ապստամբությանը: Հունիսի 28-ին Գերշենցվայզի զորքերը ռազմակալեցին Յասսին: Սակայն Դյուհամելի այս նախաձեռնությունը սկզբում չողջունվեց Նիկոլայ I-ի կողմից, ով դեռևս չէր համարձակվում Դանուբյան իշխանությունների տարածքում ռազմական գործողություններ ծավալել: Նա մտավախություն ուներ, որ դրա հետևանքով ցարիզմի դիրքերը Մոլդովայում և Վալախիայում կարող են սասանվել: Արդյունքում Գերշենցվայզին կարգադրվեց զորքերը հետ քաշել Պրուտի մյուս ափը: Պատվախնդիր գեներալը կարծելով, որ ինքը խախտել է ցարական հրամանագիրը, ինքնասպան եղավ<sup>32</sup>:

Ռուսական զորքերի այս մանրրումները չեն վրիպել «Արշալույս արարատյանի» աչքից, որը լուր է տալիս, թե «ռուսաց զորքը, որ դեպ ի Սօլտալիայի սահմանները կը ժողվվեին», ցարի կողմից հրաման են ստացել հետ քաշվելու<sup>33</sup>:

Սակայն Վալախիայում ապստամբական շարժման հետագա ծավալումը ստիպեց Նիկոլային վերանայել որոշումը և հրաման տալ զորքերը վերստին Մոլդովա մտցնելու մասին: Ցարական զորքերի մուտքով Մոլդովայում մարեց ազգա-

<sup>30</sup> «Եվրոպա», 1848, 6 հունիսի, թիւ 23, էջ 100:

<sup>31</sup> История Румынии 1848-1917, стр. 26.

<sup>32</sup> Там же, стр. 27.

<sup>33</sup> «Արշալույս արարատյան», 1848, հուլիսի 11, թիվ 313



յին շարժումը: Շարժման հաջողության համար բացասական ազդեցություն ունեցավ նաև նրա ղեկավարների շրջանում միասնական նպատակի և գործողությունների ծրագրի բացակայությունը: Ցարական ու սուլթանական իշխանությունները չհապաղեցին օգտվել սրանից և կարողացան Մոլդովայում ճնշել ազգային շարժումը: Մոլդովացիների 1848թ. ազատագրական շարժումը թեև ճնշվեց արտաքին ուժերի համագործակցված միջամտությամբ, սակայն նրանց ազգային զարթոնքն ամբողջությամբ չմարեց: Մոլդովական ընդդիմությունը պայքարի կրակը վառ պահեց նաև հետագա տարիներին՝ հատկապես եռանդով գործելով տարագրության մեջ, որն իր արդյունքը բերեց 1860-ական թվականների սկզբին, երբ հաջողությամբ պսակվեց Դանուբյան իշխանություններ Մոլդովայի և Վալախիայի միավորման համար մղվող համազգային պայքարը՝ Ռումինիա պետության ստեղծմամբ:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Արշալույս արարատյան», Զմյուռնիա 1848:
2. «Եվրոպա», Վիեննա, 1848:
3. «Հայաստան», Կ. Պոլիս, 1848:
4. Մ. Մամուրյան, Երկեր, Ե., 1966:
5. Մ. Նալբանդյան., Երկեր, Ե., 1985:
6. История Румынии 1848-1917, Ред. колл. Виноградов В.Н. и др., М., 1971.
7. Краткая история Румынии, Отв. ред. Виноградов В.М., М., 1987.
8. Революции 1848-1849, т. II, Под. ред. Потемкина Ф.В. и Молока А. И., М., 1952.
9. Шилов Д.Н., Кузьмин А.Ю., Члены Государственного совета Российской империи 1801-1906, СПб, 2007.
10. История Румынии, Под ред. М. Роллера, М., 1950.
11. И.-А. Поп, И. Болован, История Румынии, пер. с рум., М., 2005.
12. Georgescu V., The Romanian A History, Ohio State University Press Columbus, 1991.
13. Miller W., The Ottoman Empire and its Successors, 1801-1927, Cambridge at the University press, 1936.

**Армянская периодическая пресса  
о молдавском национальном движении 1848г.**

*Бернецян Арман*

**Резюме**

**Ключевые слова:** *Дунайские княжества, Молдова, революция, освободительная борьба*

В 1848г. молдовани восстали против турецкого гнета. В это время Валахия и Молдавия входили в состав Дунайских княжеств. Революционные события в княжествах, бывших вассальными государствами Османской империи и являвшихся протекторатами России, проходили в русле европейских революций 1848-1849 годов, именуемых “Весной народов” за их национально-освободительную окраску.

Революции потерпели поражение в обоих княжествах, но если в Молдавии выступления были подавлены, едва начавшись, то в Валахии на непродолжительное время власть перешла к временному правительству, которое провело крупные реформы, отменённые в 1849 году Балта-Лиманской конвенцией после русско-турецкой интервенции. В международной политике революции имели важное значение. Российская и Османская империи жёстко отреагировали на происходившее в Дунайских княжествах, введя в них свои войска и оккупировав на несколько лет, что вызвало протесты в Европе.

Армянская периодическая пресса внимательно и последовательно прокомментировала молдавское восстание. Особо выделялись представители консервативного течения, которые подробно рассказали о том, что произошло и выразили свое отношение к освободительной борьбе молдавского народа против турок.

## **Armenian Periodical Press about the Moldovan National Movement of 1848**

*Bernetsyan Arman*

### **Summary**

***Key words:*** *Danubian Principalities, Moldova, revolution, liberation struggle*

In 1848 Moldovans revolted against the Turks. At this time Wallachia and Moldavia were part of the Danubian principalities. Revolutionary events in the principalities of the former vassal states of the Ottoman Empire and the Russian Protectorate, led by European revolutionaries of 1848-1849, are called the Spring of Nations for their national liberation coloring. Revolutions were defeated in both principalities, but if in Moldova the performances were suppressed, barely starting, then in Wallachia for a short time, the power passed to the provisional government, which carried out major reforms, abolished in 1849 by the Balta-Liman Convention, after the Russian-Turkish intervention. In international politics, revolutions were important. The Russian and Ottoman empires reacted strongly to what was happening in Danubian principalities, introducing their troops into them and occupying for several years, which caused protests in Europe. The Armenian periodical press carefully and consistently commented on the Moldovan uprising. Representatives of the conservative movement emphasized in detail about what had happened and expressed their attitude towards the liberation struggle of the Moldovan people against the Turks.